



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

31.10.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ 1272-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 18-ՐԴ
ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱԽՄԱՏԻ ԹԻՄԻ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 46-րդ հոդվածով, հիմք ընդունելով Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի տնօրեն Լուսինե Մանուչարյանի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

- Ապահովել 2024 թվականի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 3-ը Երևան քաղաքում անցկացվող ՀՀ դպրոցահասակների շախմատի օլիմպիադային Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի շախմատի թիմի /4 աշակերտ և մեկ ներկայացուցիչ/ ուղևորափոխադրումը՝ Գորիս-Երևան և Երևան-Գորիս ուղղություններով:
- Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2024/31/10

Ք. Գորիս

